ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-19-Ը ՆԵՐԱՌՅԱԼ ՎՐԱՍՏԱՆ (ԲՈՐԺՈՄԻ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Նունուֆար Ստեփանյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները

Վրաստան (Բորժոմի), 2025թ. մարտի 17-19

3. Հրավիրող կողմը

Լունդի համալսարան

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն Լունդի համալսարանի «Իրավունքի վրա հիմնված կլիմայի հարմարվողականություն Հայաստանի Հանրապետությունում և Վրաստանում» առցանց ծրագրի միջանկյալ աշխատաժողովին:

5. Քննարկված թեմաները

Սույն կրթական ծրագիրը ֆինանսավորվում է Շվեդական ինստիտուտի կողմից: Առցանց դասընթացի մասնակիցները ընտրվել են Լունդի համալսարանի /Շվեդիա/ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից: Դասընթացի նպատակն է նպաստել պետական, մասնավոր հատվածի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարողությունների զարգացմանը՝ միտված կլիմայի փոփոխության և աղետների ռիսկի նվազեցման համատեքստում իրավունքի վրա հիմնված (իրավունքահեն) հարմարվողականության և մեղմման միջոցառումների մշակմանը:

Աշխատաժողովի շրջանակներում երկու երկրների ներկայացուցիչներն ուսումնասիրել են ջրային ոլորտում, մասնավորապես հեղեղումների հետ կապված կլիմայի փոփոխության հարմարվողականության համատեքստում իրականացվող միջոցառումները (բաց աղբյուրներից՝ մասնավորապես Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, միջազգային ծրագրերի հաշվետվություններ)՝

կիսվելով փորձի փոխանակմամբ: Դասախոսների կողմից առաջարկվել է նոր գործիքակազմ և մոտեցում, այն է՝ խնդիրն ուսումնասիրելիս և նման փաստաթղթեր մշակելիս կիրառել հետևյալ մոտեցումը՝ Հասանելիություն-Մատչելիություն-Որակ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատաժողովին մասնակցում էին դասընթացի ընտրված մասնակցիները (10 մասնակիցներ Հայաստանի Հանրապետությունից՝ պետական կառավարման համակարգի, հասարակական կազմակերպությունների, մասնավոր հատվածի աշխատակիցներ և 5 մասնակիցներ՝ Վրաստանի համապատասխան մարմիններից: Վրաստանի 5 ներկայացուցիչներ հարգելի պատճառներով բացակայում էին): Քանի որ աշխատաժողովը կրում էր կրթական բնույթ, ուստի առանձին ելույթներ, հանդիպումներ նախատեսված չեն եղել:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ՝ ավարտական հանդիպումն անցկացնել 2025թ. օգոստոսի 2-րդ կեսին՝ Երևանում, որին դասընթացի մասնակիցներից և դասախոսներից բացի կիրավիրվեն մասնակցելու կլիմայի փոփոխության, աղետների ռիսկի նվազեցման, ջրային ռեսուրսների ոլորտի այլ ներկայացուցիչներ ևս:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Ակնկալվում է, որ դասընթացի ավարտին մասնակիցները կունենան համապատասխան գիտելիքներ և փորձառություն՝ կլիմայի փոփոխության, աղետների ռիսկի նվազեցման ոլորտներում մշակվող ծրագրային հայեցակարգերի, փաստաթղթերի կազմման ժամանակ կիրառելու և ցուցաբերելու իրավունքի վրա հիմնված մոտեցում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Նունուֆար Ստեփանյան 28.03.2025թ.